




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
նշ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

-628-

ԱՅ. ԶՈՐԵԱՆ ԿԱՐԱՄԻՐ ԱՐԱԳԻԼ



ՊԵՏՆԻՆ 1932 ՅԵՐԵՎԱՆ

-627-


13 NOV 2017

891.549-93

ՍՏ. ԶՈՐՅԱՆ

ԿԱՐՄԻՐ ԱՐԱԳԻԼ

(Հեռագրական լուրերից)



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1932

Բուլղարական Բրազա քաղաքում լնւռ, ընդհանուր անհանգստութիւնն եր տիրում: Անհանգիստ եր վոստիկանութիւնը, անհանգիստ ելին քաղաքացիները: Յերկու կողմն ել անով սպառում ելին ինչ-վոր արտակարգ դեպքերի:

Վաղը մայիսի մեկն եր, և իշխանութիւնը կարգադրել եր վնչ մի ցույց, վնչ մի դրոշակ, վնչ մի համախմբում: Կարգադրված եր նուշնիսկ, վոր այդ որը կարմիր կտոր չլինի անգամ տների պատուհաններում, խանութների ցուցափեղկերում և թե մարդկանց վրա: Առհասարակ կարմիրը, վորպես հեղափոխութեան նշան, չպետք ե յերևար քաղաքում:

Այդ եր պատճառը, վոր վոստիկաններն այժմանից շրջում ելին փողոցները — զննում պատուհաններն ու խանութները, անգամ կտուրները՝ տեսնելու կարմիր դրոշակ՝ են տմրացնում վորեւե տեղ կամ թուղցիկ չեն փակցնում Դիտելին, վոր կոմունիստները համարձակ մարդիկ են, կարող ելին հանկարծ մի աչնպիսի բան տնել, վոր քաղաքի իշխանութիւնն ու վոստիկանութիւնը խալտառակվեր կենտրոնական կառավարութեան առաջ: Դրանից եր, վոր նրանք կրկնապատկել ելին իրենց հսկողութիւնն ու յեռանդը:

Յեւ վոստիկանների ուժեղացած այդ հսկողութիւնը, ինչ տսել կողի, անհանգստացնում եր քաղաքացիներին, վոմանք վախենում ելին խուղարկութիւնից, ձերբակալութիւնից, իսկ քաղաքներին՝ անսպասելի աղետներից:

Բայց այդ որն ամենից ավելի անհանգիստ ելին յերկու փոքրիկ տղա — Պետկոն ու Խրիստոն: Դեռ մի քանի

որ առաջ նրանք վորոշել ելին՝ մայիսի մեկին, ընկերներին հետ, կարմիր դրոշակով դուրս գալ փողոց և մասնակցել հասակավորների միախմբին (լսել ելին, վոր այդպիսի միախմբ պիտի լինի), հետո այցի գնալ հինգ տարի առաջ սպանված հեղափոխականների գերեզմանները, ուր թաղված ելին նաև Պետկոնի հայրը և Խրիստոնի մեծ չեղբայրը: Բայց իշխանութեան սպառնալից արգելքն ամբողջովին վերի կատաղի: Յեւ դրա համար Խրիստոն առաջարկում եր՝ գիշերը նավթ լցնել վոստիկանատան շենքի վրա և վառել: Պետկոն համաձայն չեր. նա գտնում եր, վոր դրանից կարող ե քաղաքը հրդեհ ընկնել, և անմեղ մարդիկ կմտավեն իդուր:

Շատ առաջարկներ արին ընկերներն իրար, բայց բոլորն ել անհամար գտան: Վերջում, յերբ արդեն հուսա-հատվել ելին, Պետկոն վեր թռավ տեղից:

— Գտն:

— Ի՜նչ, — հեռաբերքովեց Խրիստոն:

— Հետեի՛ր՝ կիմանաս:

Ու ընկերները ճանապարհ ընկան դեպի քաղաքի այգիները:

Բայց թե ինչ եր Պետկոնի գաղտնիքը — այդ պարզվեց միայն հետևյալ ուր — մայիսի մեկին:

!*

*!

Փոքր ե Բրազա քաղաքը, բայց մեծ, ընդարձակ ե նրա շուկան: Այստեղ ե հավաքվում Ժողովուրդը տոներին, հանդեսներին. այստեղ են խանութները. դրանց յեկած գեղականներն այնտեղ են ծախում իրենց կաթը, մալու, կանաչեղենն ու հավեղենը. գուռը, վոշխարը,



11-262579r

նույնիսկ տալարը: Այդ հրապարակի վրա չե գտնվում վոստիկանութիւն յերկհարկանի շէնքը, վոր հսկող աչքի նման հետեւում ե շուկայի առևտրին ու շարժումին:

Մայիսի մեկի առաջօրը վոստիկանները սովորականից ավելի ելին ալստեղ. նրանք՝ աչքները չորս՝ հսկում ելին հրապարակին ու մյուս փողոցներին, վոր ցույց լինելու դեպքում — ցրեն, հարկ յեղած պարագային — կրակեն: Դրա համար զինված ելին սովորականից ավելի:

Առաջօրը ժամը տասին, յերբ շուկան լիքն եր արդեն մթերք ծախող գլուղացիներով և առևտրի յեղած քաղաքացիներով — Պետկոն ու Խրիստոն շուկա յեկան՝ մի փակ կողով ձեռներին: Տպավորութիւնն այն եր, թե յեկել են բան գնելու կամ վաճառելու: Դրանից եր, վոր մի ծերունի հարցրեց.

— Ձեռ յեք ծախում:

— Ձե՛, տաին նրանք ու անցան առաջ, ուր խմբված ելին գլուղացիներն իրենց ապրանքով, արկղներով ու հավերով: Մտան նրանք բազմութիւն մեջ և կողովն զգուշութիւնը դրին գետնին:

— Հիմի լինչ անենք, — հարցրեց Խրիստոն:

— Սո՛ւս, սպասիր, — զգուշացրեց Պետկոն:

Յերկու վոստիկան՝ թուր ու ատրճանակ կապած և սուլիչը վզներին կախ՝ շրջում ելին շուկայում և հեռվից ուշադիր գննում ամեն մեկին ու նրա ապրանքը: Յերբ նրանք յեկան ու, սրտ-նրա ապրանքը հոտհոտելով, անցան ամեն մեկը՝ շուկայի մի կողմը, — Պետկոն շշնջաց Խրիստոնին.

— Բաց թող...

Ուռե կողովի կափարիչը բացվեց և տնտեղից դուրս թռավ մի կարմիր բան և, առևտրով զբաղված բազմութիւն միջից, բարձրացավ վեր:

Ջարմանքի ձայներ լսվեցին, իսկ վոստիկաններից

մեկը, — ավելի մոտ գտնվողը, — ապշեց մի վայրկյան. կարմիրը նրան տնայեւ շփոթեց, վոր մի քանի քայլ յետ վազեց. մեկ նրան թվաց թե «փռում» ե (թղթից շինած տն խաղալիքը, վոր յերեխաները պարանով թողնում են յերկինք) մեկ ել կարծեց՝ ծալած կարմիր դրոշակ, — յերկու դեպքումն ել կարմիր ու անթուլլաարելի, — ուստի նա առաջ վազեց, վոր բռնի, բայց վորքան մեծ յեղով զարմանքը, յերբ այդ թռչող կարմիրը թևերը բաց ու խուփ արտով և մի տարրինակ ձայն հանեց. «կըրը՛կ»...

Կին, մարդ, յերեխա, առևտուրը թողած, նաեցին թռչող կարմիրն, իսկ վոմանք բացականչելով հետեցին վոստիկանին: Սակայն վոստիկանը, չհասնելով թռչողին և միաժամանակ տեսնելով՝ ժողովուրդն իրար անցավ — դա համարեց ցուլցի նշան ու սուլից՝

Շը՛շշ...

Սուլոցի վրա վոստիկանատնից անմիջապէս դուրս թափվեցին կազմ ու պատրաստ վոստիկաններ և հետեւեցին անկարգութիւն վայրը, ուր բոլոր գլուխներն արդեն նայում ելին վեր՝ ողում սավառնող կարմիրն:

— Արագիլ ե, արագիլ, — բացականչում ելին մարդիկ:

Իսկապէս արագիլ եր: Նա թևատարած մի յերկու պտույտ գործեց շուկայի վերե, մի յերկու անգամ գլուխը թեքեց դեւ ու դեն, կարծես վորոշելու, թե ո՛ւր գնա, ու մեկել թեքվեց, ուղիղ գնաց դեպի վոստիկանատուն և հանդարտ իջավ նրա աշտարակի գլխին, ժամացույցից վեր... Շուկայում ծիծաղ բարձրացավ: Իսկ յերբ նա, իրեն հանդիստ զգալով, վորտի մեկը ծալեց դեց փորի տակ — ծիծաղը փոխվեց քրքիջի:

Դա փոքրիկ քաղաքին, նաև վոստիկաններին ծանոթ արագիլն եր, վոր որվա վորոշ ժամերին սիրում եր թառել կամ յեկեղեցու գմբեթին կամ վոստիկանատան գրմբեթանման աշտարակի գլխին, ալսինքն քաղաքի յերկու

բարձր կետերին, ուր մարդկանցից հեռու հանգստանում
էր նա, մտքերի մեջ խորասուզված:

Բայց ինչո՞ւ չէր կարմրել—այդ եր գարմանալին

— Արջունստված ե, ասում ելին մարդիկ:

— Յերևի վերավորված ե:

— Ներկել են, ներկել,—բացականչեց մեկը հան-
կարծ:— Չեք տեսնում մինչև անգամ գլուխն ու վոտները
կարմիր են...

Ու սկսեցին փսփսալ, թե ով կարող է ներկած լինել
Պետկոն ու Նրիստոն, մարդկանց արանքը խցկված,
լսում ելին այդ փսփոցները և հրճվում, վոր վոչ-վոք
գլխի չի ընկնում, թե իրենք են ներկել: Վոչ-վոք չգիտի,
թե լերեկոյան ինչ դժվարությամբ ելին բարձրացել ա-
րագիլի բունը, ինչ տանջանքով ելին իջեցրել նրան, բե-
րել տուն ու գիշերը, բոլորից ծածուկ, ներկել թանաքով,
ապա դրել մառանը, վոր առավոտը կողովի մեջ փակած
բերին շուկա:

Յեվ այժմ, լերը արագիլը կարմիր դրոշակի պես տընկ-
վել էր վոստիկանատան գլխին—Պետկոն ու Նրիստոն
չելին կարողանում իրենց գսպել: հպարտությամբ նայում
ելին նրան ու ժպտում վոստիկանների ճիգերի վրա, վո-
րոնք աշխատում ելին քարով, շարժումներով ու սուրոցով
քշել նրան աշտարակից:

Արագիլն անտարբեր նայում էր այդ բոլորին ու չէր
շարժվում: Իսկ վոստիկանները, ժողովրդի ծիծաղը տես-
նելով, կատաղում ելին: Բայց կրակել չելին համարձակ-
վում, վոր վոստիկանապետը չիմանա:

Սակայն, ընդհանուր իրարանցումը, սուրոցն ու կան-
չերը հասան, վերջապես նրան ել և շուտով շեմքի վրա
լերեսց նրա խոշոր մարմինը՝ խոշոր բեղերով, պսպղուն
ուսաղիքներով և թուրը կողքից կախ: Իմանալով բանի
եյությունը՝ նրա մոտ գեմքը կաս-կարմիր կտրեց:

— Բռնել թռչունը և հանցավորին գտնել,—կարգա-
դրեց նա բարկացած:

Հաղիվ ելին վոստիկաններից լերկուսը բարձրացել
տանիքը,--արագիլը կարմիր թևերը թափ տվեց խալուխ
ու բարձրացավ վեր:

Վոստիկանները, պարապ մարդիկ, մանավանդ լերե-
խաները, խմբերով վազեցին նրա ուղղությամբ: Իսկ այդ
բոլորի լետեվից դանդաղ, իբրև անտարբեր հետաքրքրվող-
ներ գնացին Պետկոն ու Նրիստոն՝ դատարկ կողովը ձեռ-
ներին:

Արագիլը, լերկար վոտները լերկու չոր ճիպոտի պես
լետել մեկնած, ուղիղ գծով սավառնեց դեպի լեկեղեցին:
Բայց, լեկեղեցու գլխին իջնելու փոխարեն, պտույտներ
դործեց նրա վերևը և, չգիտես ինչո՞ւ, փոշմանեց ու նո-
րից լետ դարձավ:

Նրա հետ և բազմությունը, վորին այժմ բակերից ու
փողոցներից միացել ելին հասակավորների ու մանուկների
նոր խմբեր:

Յետ դառնալով՝ արագիլը մի քանի հանդարտ, լաճն
պտույտներ արավ քաղաքի, ավելի շուտ բազմության
գլխավերև, կարծես ուզում էր իմանալ նրա հուզմունքի
պատճառը: ապա, լերը ժողովուրդը լեկեղեցու մոտից դեռ
հրապարակը չէր հասել,—լեկավ կրկին իջավ իր սիրած
տեղը՝ վոստիկանատան աշտարակին, ժամացույցի վեր:

— Կրակել, կրակել,—հրամայեց այս անգամ զայ-
րութով բռնկած պետը:

Միանգամից պալթեցին մի քանի տաճանակներ:

Արագիլը պոկվեց տեղից, նորից բարձրացավ վեր ու
թևերը լաճն տարածած, սավառնակի պես պտույտ տվեց
մի քանի անգամ, հետո հանդարտ թևածելով, ուղղվեց դե-
պի ալգինները, ուր հնորյա բարդու ճղների տրանքում
գտնվում էր նրա մեծ բուխը:

Այս անգամ ժողովուրդը չհետևեց նրան. վոստիկան-
ները նույնպես:—Ապարդյուն բան եր կտրել մոտ յերկու
կիլոմետր տարածութուն: Միայն Պետկոն ու Խրիստոն
եյին, վոր ուրախ-ուրախ գնացին նրա յետևից, ախ ել
վոչ թե այգիները, ալ իրենց տները: Նրանք այնքան ու-
րախ եյին, կարծես մեծ հաղթանակից եյին դառնում
տուն...:

*
* *


Կարծում եք արագիլի պատմութունը սրանով վերջա-
ցավ:—վոչ:

Այնուհետև մի ամբողջ շաբաթ, և ավելի, նա, կարմիր
թևերը դրոշի պես պարզած, հաճախ սավառնում եր քա-
ղաքի գլխին ու մեկ-մեկ իջնում կամ յեկեղեցու գմբեթին
կամ վոստիկանատան աշտարակին,—յերկու բարձր կե-
տերի, վորոնք իշխում են Բրազայի վրա:

Նրա թևերը կարմիր մնացին այնքան, մինչև վոր
անձրևները լվացին նրանց:

Բայց մինչև այսօր ել Բրազայում չգիտեն, թե ով
եր ներկել նրան:

Այդ բանը գիտեն միայն իրենք—Պետկոն ու Խրիստոն



Դլավ. 7571 (բ). Պատվ. № 2290 Տիրութ 5000 Հրատ. № 2292
Պետհրատի տպամանա Սրբադրեց՝ Վսկան Հակոբյան

Հանձնված ե արտադրության 5/ VII / 1932
Ստորագրված ե տպելու 10/ XI / 1932

ՀՀ Ազգային գրադարան



NL0935768

4120' 15 400.

1939. - 737

11

26257

737

Ст. Зорян
КРАСНЫЙ АИСТ

ГИЗ ССРМ Эривань